Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 44-Ն ԵՎ 45-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 44-Ն որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի ոչ թե 2-րդ կետին, այլ՝ մասին:

Որոշման 3-րդ կետում ուժը կորցրած ճանաչվող իրավական ակտի վերնագրում նշված «2018» թիվը փոխարինել «2019» թվով:

Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 5-րդ կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը՝ «տասնութ հազար դրամ» բառերը փոխարինել «երեսուն հազար դրամ» բառերով, 6-րդ կետով սահմանվածը՝ «տասնհինգ հազար դրամ» բառերը՝ «քսանհինգ հազար դրամ» բառերով:

Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի դրույթները սխալ են համարակալված: Բացի այդ, 7.1 կետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, իսկ 7.3-րդ կետում՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը:

Թիվ 45-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ոչ թե 33-րդ հոդվածի 2-րդ մասին, այլ՝ 37-րդ հոդվածի 1-ին մասին: Բացի այդ,որոշման 1-ին կետում նշված «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
23.01.2020թ.